ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 մայիսի 2015 թվականի **թիվ 10** քաղ. Բուրաբայ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների արտադրության եւ օգտագործման խթանման ապահովմանն ուղղված միջոցառումների 2015-2017 թվականների պլանի մասին

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների արտադրության եւ օգտագործման խթանման ապահովմանն ուղղված միջոցառումների 2015-2017 թվականների պլանը:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ համատեղ ապահովել սույն Կարգադրությամբ հաստատված պլանով նախատեսված միջոցառումների իրագործումն այնքանով, որքանով դա համապատասխանում է ոլորտի զարգացման գերակա ազգային խնդիրներին:

3. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական միջկառավարական խորհրդի

2015 թվականի մայիսի 29-ի թիվ 10

կարգադրությամբ

ՊԼԱՆ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների արտադրության եւ օգտագործման խթանման ապահովմանն ուղղված միջոցառումների՝ 2015-2017 թվականների

Միջոցառման անվանում	Իրագործման ձեւ	Կատարման ժամկետ	Կատարող
I. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների, դրանց բազային բաղադրիչ մասերի, ինչպես նաեւ լիցքավորման եւ սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտների արտադրության խթանման ապահովմանն ուղղված միջոցառումներ			
1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում (այսուհետ՝ անդամ պետություններ) էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների, դրանց բազային բաղադրիչ մասերի, ինչպես նաեւ լիցքավորման եւ սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտների արտադրության աջակցության միջոցների համակարգի մշակում, ինչը, մասնավորապես, ենթադրում է՝	անդամ պետությունների ակտեր	2016 թվական	անդամ պետություններ

Միջոցառման անվանում	Իրագործման ձեւ	Կատարման ժամկետ	Կատարող
էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների, դրանց բազային բաղադրիչ մասերի, դրանց արտադրության համար սարքավորումների մշակման եւ արտադրության, ինչպես նաեւ այդպիսի տրանսպորտային միջոցների համար լիցքավորման եւ սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտների ստեղծման եւ դրանց սպասարկման ծրագրերի իրագործման համար վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում եւ դրամաշնորհների տրամադրում			
էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների, դրանց բազային բաղադրիչ մասերի, ինչպես նաեւ լիցքավորման եւ սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտների արտադրության զարգացման համար ներդրումների ներգրավման մեխանիզմի մշակում			
էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների, դրանց բազային բաղադրիչ մասերի, ինչպես նաեւ լիցքավորման եւ սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտների արտադրության խթանման այլ ֆինանսական եւ ոչ ֆինանսական մեխանիզմներ			
2. Անդամ պետություններում չարտադրվող՝ էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների, դրանց բազային բաղադրիչ մասերի եւ լիցքավորման եւ	Հանձնաժողովի որոշում անդամ պետությունների առաջարկությունների	2015-2016 թվականներ	Հանձնաժողով, անդամ պետություններ

Միջոցառման անվանում	Իրագործման ձեւ	Կատարման ժամկետ	Կատարող
սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտների արտադրության համար նախատեսված ներմուծվող կոմպլեկտավորող տարրերի համար ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի նվազեցում	հիման վրա		
3. Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների ստեղծված նմուշների ապրոբացիայի համար անդամ պետություններում առկա մեքենափորձարկման կայանների պատրաստության ապահովմանն ուղղված միջոցառումների պլանի մշակում	Հանձնաժողովի առաջարկություն	2016 թվական	Հանձնաժողով, անդամ պետություններ
II. Անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման խթանման ապահովմանն ուղղված միջոցառումներ			
4. Անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների օգտագործման խթանմանն ուղղված միջոցների համակարգի մշակում, ինչը, մասնավորապես, ենթադրում է՝	անդամ պետությունների ակտեր	2016-2017 թվականներ	անդամ պետություններ
էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների տիրապետողներին լիցքավորման սարքերով կահավորված անվճար կայանատեղերից օգտվելու իրավունքի տրամադրում			
էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների համար վճարովի ավտոճանապարհներով անվճար երթեւեկելու իրավունքի			

Միջոցառման անվանում	Իրագործման ձեւ	Կատարման ժամկետ	Կատարող
տրամադրում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների համար հասարակական տրանսպորտի համար նախատեսված գոտիներով տեղաշարժվելու իրավունքի տրամադրում ավտոլցակայանների, ինչպես նաեւ շահագործման մեջ դրվող հասարակական նշանակության շենքերի եւ կառույցների՝ էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների համար լիցքավորման սարքերով սարքավորում օգտագործված քարշային մարտկոցների հավաքման, պահպանման եւ ուտիլիզացման համար ենթակառուցվածքի զարգացում լիզինգով էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների տրամադրում			
5. Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների համար լիցքավորման եւ սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտներ իրենց տարածքներում տեղադրող կազմակերպությունների համար արտոնությունների համակարգի մշակում	անդամ պետությունների ակտեր	2016 թվական	անդամ պետություններ
6. Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների համար լիցքավորման եւ սպասարկման ենթակառուցվածքների օբյեկտների	Հանձնաժողովի առաջարկություն	2016 թվական	Հանձնաժողով, անդամ պետություններ

Միջոցառման անվանում	Իրագործման ձեւ	Կատարման ժամկետ	Կատարող
կառուցման, ինչպես նաեւ էլեկտրական ցանցերին դրանց միացման ժամանակ թույլատրման փաստաթղթերի ձեւակերպման պարզեցված կարգի մշակում			
7. Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների պահանջարկի խթանմանն ուղղված տեղեկատվական ծրագրերի մշակում եւ դրանց տեղադրում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնական կայքերում	Հանձնաժողովի առաջարկություն	2015 - 2017 թվականներ	Հանձնաժողով, անդամ պետություններ